

**HORAIRE D'ÉTÉ**  
à partir du 9 juin 2003

Du lundi au vendredi: de 8h15 à 14h30  
Samedi: de 8h15 à 12h30

079 1332  
www.aztag.com / E-mail: info@aztag.com

البنك اللبناني الفرنسي  
**BANQUE LIBANO-FRANÇAISE**

**ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՊԻՏԻ ՓՈՐՁԵՆ ԿԱՍԵՅՆԵԼ ԱՐԳԻԼԵԱԼ ՁԷՆՔԵՐՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ...**

ՈՒՍԵՆԿԵՐ, 5 (ԱՅՓ).- Միացեալ Նահանգներ պիտի փորձեն կասեցնել աշխարհի տարածքին քիմիական, կենսաբանական եւ կորիզային զէնքերու տարածումը եւ անոնք կրնան ուժի դիմել այդ մահացու զէնքերը հեռացնելու համար «անսահմ երկիրներէ», պոնտագուցա՞ծ է Մ. Նահանգներու արտաքին գործոց փոխ նախարար ձոն Պոլթընը:

### ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎԸ ԴԱՐՁԵԱԼ ԵՂԱՒ ՓՈԹՈՐԿՈՏ

Նախարարաց խորհուրդը երէկ երեկոյեան ժամը 5:30ին թանգարանի շրջանի իր կեդրոնատեղիին մէջ գումարեց իր ընթացիկ նիստը, գլխաւորութեամբ նախագահ Վոր. Էմիլ Լահուտի: Ժողովը օրակարգի վրայ ունէր 65 կէտեր, որոնք չէին ընդգրկել «փշոտ» հարցեր կամ «խնդրայարոյց» թղթածրարներ:




Երկու ժամ տեւած այս ժողովը չաւարտեցաւ բնականոն ընթացքով, որովհետեւ ընդվզած նախարարներ չբեցին ժողովարարի ու հեռացան անանց թղթակիցներու բացատրութիւն տալու: Յաջորդաբար հեռացած նախարարներն են՝ Մարուան Համատէ, Ապտալլա Ֆարիաթ, Ղազի Արիտի, Նաժիպ Միքաթի, Սամիր Ժարր, Ֆարէս Պուէյլ եւ Ժան Օպէյա: Աւելի ուշ հաղորդուեցաւ, որ իշխեալ նախարարներէն երեք վերադարձած են ժողովարար:

Յարդը՛ ըստ իր պաշտօնապէս, թէ վարչապետ Հարիրիի ներկայութեան գումարուած այս ժողովին փոթորկումին գլխաւոր պատճառը ի՛նչ է, սակայն ըստ կարգ մը լրատուամիջոցներու, հարց ստեղծուած է մաշուրով բանող վաներու թղթածրարի քննութեան աւարտին եւ քարահանքերու թղթածրարի քննութեան նախօրեակին:

### ՈՒՇ ԿԱՄ ԿԱՆՈՒԽ ԻՐԱՔԻ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՔԱՆԴՈՒՄԻ ԶԷՆՔԵՐԸ ՊԻՏԻ ԳՏՆՈՒԻՆ

Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պուշ, որ երկու վեհաժողովի նախագահած էր Միջին Արեւելքի մէջ, երէկ Քաթարի մէջ յայտարարեց, որ ուշ կամ կանուխ Իրաքի հաւաքական քանդումի զէնքերը պիտի գտնուին: Մինչ Պուշ կը խօսէր Քաթարի ամերիկեան ուժերուն խա-

կըստ նախագահ ձորձ Պուշ, որ երկու վեհաժողովի նախագահած էր Միջին Արեւելքի մէջ, երէկ Քաթարի մէջ յայտարարեց, որ ուշ կամ կանուխ Իրաքի հաւաքական քանդումի զէնքերը պիտի գտնուին: Մինչ Պուշ կը խօսէր Քաթարի ամերիկեան ուժերուն խա-



Պուշ

րիսխին մէջ, Իրաքի մէջ կը սպաննուէր ամերիկացի զինուոր մը եւ քանի մը ուրիշներ կը վիրաւորուէին՝ նոր յարձակումի մը թիրախ դառնալով:

Պուշ, որ կը խօսէր աւելի քան 2500 ամերիկացի զինուորներու դիմաց, ըսաւ, որ Սատամ Հիւսէյն տասնամեակներ անցուցած էր հաւաքական քանդումի զէնքեր պատրաստելով ու պահելով: Պուշ աւելցուց, որ իրաքցի ղեկավարը առիթ ունէր ընդարձակ երկիրին մէջ պահելու զէնքեր, որոնք սակայն անպայմանօրէն պիտի յայտնաբերուին եւ ամբողջ աշխարհը պիտի գիտնայ, որ այդ զէնքերը գոյութիւն ունին: Պուշ ըսաւ նաեւ, որ ահաբեկչական որեւէ կազմակերպութիւն Իրաքէն զէնք պիտի չստանայ յետայնու, որովհետեւ Պաղտատի բռնատիրական վարչակարգը տապալած է եւ Իրաք պիտի դադրի անոնց զէնք հայթայթող երկիրը ըլլալէ:

Խօսելով Իրաքի իրավիճակին մասին, Պուշ ըսաւ, որ դաշնակից ուժերու հսկողութեան տակ Պաղտատի եւ այլ քաղաքներու փողոցներ օրը-տօրէ աւելի ապահով կը դառնան: Պուշ խոստովանեցաւ սակայն, որ տակաւին գոյութիւն ունին ընդդիմութեան փոքր խմբակներ, որոնք շուտով հակակշիռի տակ պիտի առնուին:

Պուշի խօսքերը սակայն չերաշխաւորեցին ապահովութիւնը ամերիկացի զինուորի մը, որ երէկ սպաննուեցաւ Ֆալլուժա քաղաքին մէջ: Չինեալներ ձեռնառումներ նետած էին խումբ մը ամերիկացի զինուորներու վրայ, որոնք մէկ զոհ եւ հինգ վիրաւոր տուին: Ամերիկեան ուժերու կեդրոնական հրամանատարութիւնը յայտնեց, որ յաւելեալ ուժ պիտի ուղարկէ Ֆալլուժա, որ քանի մը նման միջադէպերու բեմ դարձած է: Ֆալլուժա կը գտնուի Պաղտատի արեւմուտքը: Ըստ ամերիկեան աղբիւրներուն՝ Սատամի համակիր զինեալներ կը կազմակերպեն յարձակումները եւ թէ անոնք կը վայելեն կարգ մը արմատական - իսլամական շարժումներու պօրակցութիւնը:

Ֆալլուժայի միջադէպին պուզահեռ, Պաղտատի մէջ վիրաւորուեցան ամերիկացի երկու զինուորներ, որոնք փամփոշուներու տարափի մը տակ ինկած են անցարգելի մը վրայ: Չինուորները հակադարձած են երկու զինեալ վիրաւորելով:

Իրաքի մէջ ՄԱԿի մասնաւոր պատուիրակ Սերժիո Վիերա Տէ Մէլիօ դատաւարտեց դաշնակից ուժերուն դէմ գործուած յարձակումները:




Պիքս

ՄԱԿի զէնքերու գլխաւոր քննիչ Հանս Պիքս յայտարարեց, որ պատերազմի յայտարարութենէն առաջ իսկ Իրաք հաւանաբար ձեռքապատած էր հաւաքական քանդումի զէնքերէն՝ պանոնք փճացնելով: Պիքս դիտել տուաւ, որ թե-

րեւ տակաւին զէնքեր գտնուին, սակայն որքան ժամանակը կ'անցնի այնքան աւելի հաւանական պիտի դառնայ այն տեսակէտը, թէ հաւաքական քանդումի զէնքեր գոյութիւն չունին Իրաքի մէջ:

### ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ ՔՈՉԱՐԵԱՆ ԵՒ ՔԱԶԱՆՑԵՒ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՀԱՅԵՒՌՈՒՄ ԿԱՊԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՆՉՈՒՈՂ ՀԱՐՑԵՐ



Հայաստանի նախագահ Ռուպէրթ Քոչարեան երէկ ընդունեց Ռուսիոյ հարաւային դաշնակցային մարզին մէջ Ռուսիոյ նախագահի լիազօր ներկայացուցիչ Վիքթոր Քապանցեւի գլխաւորած պատուիրակութիւնը: Հանդիպումին ընթացքին նախագահ Քոչարեան կարեւորեց երկու երկիրներու տարածքային վարչական միաւորներու մակարդակի վրայ կապերու աւելի եւս վարգազումը:

Շնորհակալութիւն յայտնելով բարեկամական ընդունելութեան համար, Վիքթոր Քապանցեւ արտայայտեց իր ջերմ վերաբերմունքը Հայաստանի եւ հայ ժողովուրդի հանդէպ: Ան անհրաժեշտ նկատած է նախապէս տարբեր մարզերու մէջ գոյութիւն ունեցած կապերու վերականգնումն ու վարգազումը: Քապանցեւ դիտել տուած է, թէ Ռուսիոյ հարաւային դաշնակցային մարզը ունի բոլոր հնարաւորութիւնները՝ Հայաստանի հետ երկարամիջոց եւ սերտ համագործակցութիւն ծաւալելու համար: Այս իմաստով ռուս պաշտօնատարը առաջնահերթ նկատած է աշխատանքային ծրագիրի մը մշակումը, որ հնարաւորութիւն կու տայ նախագծել գործակցութեան հիմնական ուղղութիւնները եւ հետեւողական ձեւով իրականացնել անհրաժեշտ քայլերը:

Իբրեւ փոխահաւետ գործակցութեան մարզեր, կողմերը յատկապէս նշած են գիւղատնտեսութիւնը, մշակոյթը եւ փոխադրամիջոցներու մարզը: Վիքթոր Քապանցեւ այցելած է նաեւ Գիւմրի քաղաք, ուր աւելի քան տաս տարի զինուորական ծառայութիւն կատարած է: Ան երախտագիտութիւն յայտնած է Հայաստանի իշխանութիւններուն՝ ռուս զինուորներուն հանդէպ դրսեւորուող սիրալիր վերաբերմունքին համար:

### ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԸ ՈՂՁՈՒՆԵՑ ԱՔԱՊԱՅԻ ՎԵՀԱԺՈՂՈՎՆ ՈՒ ԱՆՈՐ ԱՒԱՐՏԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԱԾ ԽՈՍՏՄՆԱԼԻՑ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Միջազգային ընկալիքը ողջունեց Արադայի վեհաժողովն ու անոր անարտիւն հրատարակուած խոսքումնայից յայտարարութիւնները: Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փատրլի յաղաղութեան միջազգային քառակից գեկուցեց մանրամասնութիւնները Արադայի վեհաժողովին: Ան հեռաձայնային հաղորդակցութիւններ ունեցաւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովի, ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի եւ Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան դաւառախաճարու Խաւիէ Սոլանայի. ինչո՞ղէն նաեւ՝ Յունաստանի արտաքին գործոց նախարար ձորձ Փափանկիթիսի հետ, որուն երկիրը՝ Ե. Միութեան ընթացիկ նախաշրջանի նախագահն է:

Փատրլի ընկերակցող դաշնակցութեան մը ըսաւ, որ բոլորն ալ չափազանց յանդավառ են շրջանին մէջ յաղաղութիւն հաստատելու կարելիութեամբ: Յունաստան յայտարարեց, որ մեծ գոհունակութեամբ կ'ողջունէ Արադայի վեհաժողովին արդիւնքը: Ե. Միութեան նախագահութեան կողմէ հրատարակուած յայտարարութիւնը դիպել կու փար նաեւ, որ ժամանակը հասած է, որոյնչո՞ղ Միջին Արեւելքի ղեկավարները անհրաժեշտ գիջումները կարարեն յաղաղութիւն հաստատելու համար:

Ռուսիա եւս ողջունեց արդիւնքները: Արտաքին գործոց նախարարութեան կողմէ հրատարակուած յայտարարութիւնը կը նշէր, որ առաջին քայլերը միջոց կ'ըլլան ամենէն դժուարը: Ասոր համար է, որ Միւնխէն Աղոյասի եւ Արիէլ Շարոնի կարարած յայտարարութիւնները մեծ կարեւորութիւն կը ներկայացնեն, կ'աւելցնէր ռուսական յայտարարութիւնը:

Արադայի վեհաժողովն ու անոր արդիւնքները ողջունեցին նաեւ ձափոն, Չինաստան եւ այլ երկիրներ, որոնք զանոնք կարեւոր քայլ մը նկատեցին յաղաղութիւն հաստատող ճամբուն վրայ:

Արադայի վեհաժողովին արտաքին հրատարակուած յայտարարութիւնները լուրջ յանձնառութիւններու դիմաց կը դնեն դադեպիւնեան իշխանութիւնն ու Իսրայէլը:

Իսրայէլի ռաբիոկայանը հաղորդեց, որ դաշնակցութեան նախարար Շաուր Մոֆազ հանդիպումի մը իրաւորած է բարձրաստիճան դաշնակցութեան ընկերակցելու համար դադեպիւնեան շրջաններու մէջ առօրինի կերպով կառուցուած բնակեցման վայրերու քանդումի ծրագիրը, որ խոստացաւ Շարոն Արադայի մէջ: Ըստ ռաբիոկայանին, այս սրբաշունչ կառուցող միջոցառումներ տիրի սրբեզրբիւն յատարակայ շարքուան մէջ:







ՐԱՅ ԴԱՏ

ՐԱՅ ԴԱՏ

ՆՅԱՐ

«ԺԱՄԱՆԱԿՆ Է ԴԱՆՉՆԱԼՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ»  
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱԳԻ,  
ԹԷ ԻՍԿԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄ

Միացեալ Նահանգներու նախագահութեան քեկնածու ձոն էտուրրոզ վերջերս Հայ Դատի յանձնախումբի մէկ պատուիրակութեան հետ տեսակցութեան մը ընթացքին յայտարարած է. «Ժամանակն է Բանջնալու Հայկական Ցեղասպանութիւնը»: Ան դիտել տուած է, որ Թուրքիոյ կողմէ Հայաստանի ապօրինի շրջափակումը պէտք է դադարի եւ Ուաշինկթըն պէտք է նեցուկ կանգնի Հայաստանի...

Եթէ մեր յիշողութիւնը քիչ մը աշխուժացնենք, կ'անդրադառնանք, որ այս մէկը ամերիկացի դեկավարի մը եւ, աւելի ճիշդը, գօրակցութիւն փնտոող նախագահութեան քեկնածուի մը «հասկացատ» առաջին յայտարարութիւնը չէ: Արդարեւ, Փետրուար 2001ին նախընտրական արշաւի ծիրին մէջ նախագահութեան օրուան քեկնածու եւ այժմու նախագահ ձորն Պուշ ամերիկահայերուն յղած էր նամակ մը, որուն մէջ կը հաստատէր. «Հայերը ենթարկուած են անըմբռնելի ցեղասպանական արշաւի մը, որ բոլոր պարկեշտ մարդոց կը պարտադրէ, որ յիշեն եւ Բանջնալու մարդկութեան դէմ արիննայի ոնիրներով յատկանշուող դարու մը ընթացքին տեղի ունեցած այս ահաւոր ոնիրին իրողութիւններն ու դասերը: Եթէ նախագահ ընտրուիմ, պիտի հսկեմ, որ մեր ազգը պատշաճօրէն Բանջնալու հայ ժողովուրդին ողբերգական չարարանքը»: Իսկ այս խոստումին արդիւնքը...

Արդիւնքը այն էր, որ Պուշ այնքան ալ պարկեշտ չեղաւ եւ գրծեց իր խոստումը: Պուշ ոչ միայն գրծեց իր խոստումը, այլ իր նախագահութեան առաջին իսկ օրէն տուաւ Հայաստանին եւ ընդհանրապէս հայ ժողովուրդին համար ժխտական որոշումներ: Այսպէս, օրինակ ԱՖդալիստանի դէմ պատերազմի ծիրին մէջ, Ազրպէյճանը սիրաշահելու միտումով, Պուշ անկային 1992ին գործադրութեան դրուած Յօդուած 907ը, որ կ'արգիւրէ Ուաշինկթընի կողմէ Ազրպէյճանին ուղղակի ճիւղարկումը յայտարարեց: Յօդուածը մինչեւ օրս կը մնայ անկայ:

«Ահաբեկչութեան դէմ պայքարի ծիրին մէջ գաղտնիակներու հարցերով գրադող մեթոդներով պետական մարմինը Դեկտեմբեր 2002ին հրատարակեց երկրներու ցանկ մը, որուն վրայ կը գտնուէր նաեւ Հայաստան: Այդ մարմինին որոշումով Միացեալ Նահանգները բնակող եւ այլ ցանկին վրայ գտնուող երկրներուն քաղաքացիները յատուկ կարգադրութեամբ պէտք է իրենց անունը արձանագրէին ճշեալ մարմինին մօտ: Բնականաբար, ամերիկահայութեան կողմէ բողոքի անցանքները արշաւի մը շնորհիւ Հայաստանի անունը ջնջուեցաւ ցանկէն:

Այս շրջանի «իրագործումներուն շարքին կարելի է նկատել նաեւ Սպիտակ Տան կողմէ յաճախ Քոնկրէսին ներկայացուած այն առաջարկը, որ կը պահանջէ Ուաշինկթընի կողմէ իրեն օժանդակութիւնը Հայաստանի տրամադրուած տարեկան 90 միլիոն տոլարի գումարը նուազեցնել 45 միլիոն տոլարի: Թեեւ Քոնկրէսը ճշեալ առաջարկը չվաւերացուց 2003 տարուան համար, սակայն Սպիտակ Տունը նոյն առաջարկը ներկայացուց 2004 տարուան արտաքին օժանդակութիւններուն համար:

Այս բոլոր տեղի ունեցած Հայկական Ցեղասպանութիւնը Բանջնալու խոստում տուող Պուշի նախագահութեան օրերուն: Սակայն արդար ըլլալու համար պէտք է ըսենք, որ ձորն Պուշի մեծագոյն «իրագործումը» ար այս տարուան 24 Ապրիլի իր ուղեորն էր, որուն մէջ ան չբաւականացաւ «Ցեղասպանութեան» փոխարէն «ողբերգութիւնը» բառը գործածելով, այլ գնաց շատ աւելի անդին՝ ողջունելով հայ-բքբակներ «հաշտութեան» եւ «երկ-խօսութեան» փորձերը, եւ այդ շրջափոխին մէջ իր իսկ նախագահութեան սկզբնական շրջանին ու իր երկրին արտաքին գործոց նախարարութեան նախաձեռնութեամբ ստեղծուած այսպէս կոչուած «Հայ-բքբակներ հաշտութեան յանձնաժողովը»:

Գանք ներկայ օրերուն: Ահաւասիկ նախագահութեան այլ քեկնածու, որ իր կարգին հայաստան յայտարարութիւն մը կը կատարէ: Թեեւ կարելի չէ գուշակել, թէ որքանով անկեղծ է էտուրրոզ իր յայտարարութեան մէջ, սակայն այն իրողութիւնը, որ թէ՛ Քլինթընը եւ թէ՛ Պուշ ընտրարշաւի իրենց օրերուն խոստացած են Բանջնալու Հայկական Ցեղասպանութիւնը, եւ ապա՝ դրժած այդ խոստումը, մեզի որոշ պատկերացում մը կու տայ ճշեալ հայաստան արտաշայտութեան նախագահութեան մասին: Բոլոր երկրներուն մէջ, անխորտիք, նախընտրական ժամանակաշրջանները կ'ըլլան խոստումներով, ղեմախոսութեան, շահագործումներով լեցուն 2րբաններ: Սակայն այս մէկը չ'արդարացնէր ըսուեցէր պահովելու միտումով ամերիկացի դեկավարներուն կողմէ Հայկական Ցեղասպանութեան շահագրգռումը: Մեզի պէտք չեն աչքին փոշի ցանող հայաստան խոստումներ: Ո՛չ այլ պէտք են Պուշի եւ Քլինթընի նման դեկավարներ, որոնք հակառակ իրենց խոստումներուն, նախագահ ըլլալէ ետք յանկարծ «կը յիշեն», որ Թուրքիա ռազմավարական կարեւոր դիրք ունի, կարեւոր դաշնակից է եւ այլն...

«Քալիֆորնիա Քուրիլը» բերքի 29 Մայիսի իրիւն մէջ իրենց խմբագիր Յարոլդ Ստունեանն անդրադառնալով Քոնկրէսի արդարադատութեան յանձնախումբին կողմէ Հայկական Ցեղասպանութեան եւ այլ ցեղասպանութիւններու վերաբերող բանաձեւի որդեգրումին հարց կու տար, թէ Քոնկրէսը ըսելով «անգամ պէտք է Բանջնալու Ցեղասպանութիւնը»: Իսկ մենք հարց կու տանք, թէ տակաւին ըսելով՝ նախագահութեան քեկնածու պիտի խոստանան նաեւ Հայ Ցեղասպանութիւնը...

Հ. ՄԱՅԻՍԵԱՆ

ՆԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՐԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԱՄ ԾԱՐԱԴՐԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԻ

Ինչպէս նախապէս հաղորդած էինք, Թուրքիոյ կրթութեան նախարար Հիւսէյն Չելիքի կողմէ վերջերս հրատարակուեցաւ շրջաբերական մը, ուր կոչ կ'ուղղուէր Թուրքիոյ տարածքին գործող բոլոր դպրոցներուն՝ կազմակերպել Հայկական Ցեղասպանութեան մասին շարադրական մրցումներ, որոնց առանցքը պէտք է կազմէ Հայկական Ցեղասպանութեան թրջական՝ պետական մեկնաբանութիւնը: Թուրքիոյ կրթութեան նախարարութեան այս որոշումին հրատարակումէն ետք, թրջական մամուլին մէջ լոյս կը տեսնեն քննադատական յօդուածներ: Արարքը դատապարտում է կ'արժանանայ նաեւ որոշ մարմիններու կողմէ:

Պոլսոյ «Մարմարա» օրաթերթը կը տեղեկացնէ, թէ թրջական «Ռատիթալ» թերթին մէջ վերջերս լոյս տեսած է Սեմա Խօզիւնիւկի ստորագրութեամբ յօդուած մը՝ «Այսպէս կոչուած շարադրութեան մրցում» խորագրով: Յօդուածագիրը «այսպէս կոչուած» բառակապակցութեամբ հեղինակն ահաբեկութիւն մը կ'ընէ Թուրքիոյ պետական ներկայացուցիչներուն կողմէ օգտագործուող «այսպէս կոչուած Հայկական Ցեղասպանութիւնը» եզրին:

Յօդուածագիրը դիտել տուած է, թէ կրթութեան նախարարութեան այս որոշումը կը հակասէ նոյնինքն կրթութեան նախարարութեան սկզբունքներուն եւ հակոտնեայ է նախարարութեան կողմէ անկախութիւնը չարօրիններուն: Այս իմաստով, կը գրէ յօդուածագիրը, նախարարութիւնը միշտ նկատել տուած է, թէ շարադրութիւնները ահաբեկներուն մտածումներն ու զգացումները ցրուացնող գրութիւններ են, իսկ այս պարագային, ահաբեկներուն կը հրահանգուի

որոշ ուղղութեամբ շարադրութիւն մը գրել: «Ահաբեկները չեն կրնար անկողմնակալ ըլլալ: Չեն կրնար պահանջուած նիւթին հակառակ գրել: Անոնք նաեւ տակաւին չեն հասած այնպիսի տարիքի մը, որպէսզի հասկնան, թէ իրենց գլխուն ինչէ՞ր կրնան գալ, եթէ շարժին հոսանքին դէմ: Արդէն ուսուցիչներուն ալ հրահանգուած է, որ ուշադիր ըլլան եւ ահաբեկներուն ձեռքէն սխալ բան դուրս չգայ», նշած է «Ռատիթալ» յօդուածագիրը:

Միւս կողմէ, Կեսարիոյ մէջ հրատարակուող «Պուլիք Քալսերի» թերթին մէջ հրատարակուած է նախարարութեան որոշումին գծով քննադատական յօդուած մը: Յօդուածագիր Մեթին Սէօնմէզ դիտել տուած է, թէ՛ «որոշ մարդիկ չեն կրնար ապրիլ՝ առանց ատելութիւն եւ թշնամութիւն սեմանելու իրար միջեւ»: Ան լուսարձակի տակ կ'առնէ նախարարութեան շրջաբերականին ամէնէն խնդրայարօց բաժինները, ուր ահաբեկներուն կը պահանջուի անխուսափելիօրէն գործածել «այսպէս կոչուած Հայկական Ցեղասպանութիւնը» եզրը, կ'արգիւրէ արծարծել որոշ մօտեցումներ, օրինակ՝ «Հայերը մեզ սպաննեցին, այնուհետեւ մենք ալ անոնց սպաննեցինք»:

Դատապարտելով Թուրքիոյ կառավարութեան քաղաքականութիւնը՝ յօդուածագիրը կրթութեան նախարարութեան որոշումը կը նկատէ նմուշ մը ատելութիւն սերմանող քաղաքականութեան, որուն մաս կը կազմէ նաեւ, ըստ յօդուածագիրին, վերջերս Թուրքիոյ պետական պատկերասփիւռէն սփռուած «Սարը Կելին» ժապաւէնը:

ԱԶՐՊԷՅԾԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԿ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ԲՈՒՆԱԳՐԱԻՆԸ

Լիթվանիոյ պաշտպանութեան նախարար Լիտաս Լինգեւիչուսի հետ վերջերս ունեցած իր բանակցութիւններուն ընթացքին Ազրպէյճանի պաշտպանութեան նախարար Սաֆար Ապիբեւ շատ յոտանորէն խօսեցաւ Ազրպէյճանի հարաւարկին Հայաստանէն ունեցած հողային պահանջներուն մասին: Ան բառացիօրէն հետեւեալը ըսաւ. «Հայաստան միշտ պէտք է ի մտի ունենայ, որ եթէ Ազրպէյճան երէկ համաձայն գտնուեցաւ բանի մը, պայման չէ, որ այսօր կամ վաղը նաեւ համաձայն գտնուի անոր: Ազրպէյճան չ'ուզեր, որ Նախիջեւանը մեր հողէն բաժնուած երկիր մը, ըսել կ'ուզեմ՝ չենք ուզեր, որ Նախիջեւանը մեր հողէն բաժնուած ըլլայ: Այս հարցը պիտի արծարծենք վաղը...»:

Այս բառերը ցնցեցին նոյնիսկ ազերի լրագրողները: «Այս մէկը չի՞ նշանակեր արդեօք, որ Ազրպէյճան Հայաստանէն հողային պահանջներ պիտի ունենայ», գրեց Պաքուրի «Կագէթ 525» թերթը: Թերթը վկայակոչեց քաղաքագէտ Թասիմ Մուսաբէկովը, որ ըստ երեւոյթի, նեղացած էր նախարարին կողմ յայտարարութեան: Ապիբեւ յայտարարութիւնը մեղմացը նելու փորձով մը՝ մասնաբաշտը տարուական արտադարութիւն մը ունեցաւ: «Ընդհանուր առմամբ այս յայտարարութիւնը զինուորական մարդու խօսք է, եւ ոչ՝ դիւանագէտի: Պաշտպանութեան նախարարը անպայմանօրէն ստիպուած չէ միջազգային օրէնքի սկզբունքներուն հետեւելու: Այսպէս,

փորձեց արդարացնել իր նախարարը, յստակ էր, թէ ան չէ ախորժակ գործարարելի մէջ: Այսուհետեւ մեղադրելի պիտի չըլլայ, եթէ օրինակի համար, Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով յանկարծ յայտարարէ, թէ չ'ուզեր, որ Քալինինկրատի շրջանը հետու ըլլայ եւ այդ պատճառով Քրեմլին պիտի իւտուեցնէ Լաթվիան ու Լիթվանիան: Ի՞նչ է հարցնայ այս պարագային: Իվանով դիւանագէտ մը չէ եւ, Մուսաբէկովի տրամաբանութեան համաձայն, ստիպուած չէ հետեւիլ միջազգային օրէնքի սկզբունքներուն: Նոյն տրամաբանութեամբ, արդարացի կ'ըլլար, եթէ Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնըլտ Ռամսֆելտ պահանջէր Քասախի արեւմտեան ափը, որ կարեւոր է Ալաքսայի հետ հաղորդակցելու համար: Ռամսֆելտ զինուորական մարդ է, հետեւեալը կրնայ չենթարկուիլ միջազգային օրէնքին:

Սակայն, հակառակ անոր որ Մուսաբէկով «ՓԵՆ ԱՐՄԻՆԻԸՆ» ԿԱՅՔ

ՊԱՔՈՒ

«ՂԱՐԱԲԱՂԸ ՄԻ՛ ՄՈՒՆԱՔ. ԱԶԱՏԱԳՐԵՅԷ՛Ք ԶԱՅՆ» ԱՐՇԱԻ

Ազրպէյճանի «Պաքու Թուտէյ» օրաթերթը 26 Մայիսին հաղորդեց, թէ Ազրպէյճանի Երիտասարդական կազմակերպութեան Ազգային Խորհուրդը վերջերս սկսած է «Ղարաբաղը մի՛ մոռնաք. ազատագրեցէ՛ք գայն» կարգախօսով արշաւ մը: Թերթին համաձայն, խորհուրդը իր շուրջ համախմբած է 46 երիտասարդական կազմակերպութիւններ՝ գանձը քաջալերելու, որ մասնակցին արշաւին եւ ներքին կանգնի անոր: Խորհուրդը հրատարակած է հաղորդագրութիւն մը, որում մէջ ողջունած է հայ-ազրպէյճանական տագնապը «խաղաղ» ձեւերով լուծելու Ազրպէյճանի պետութեան ջանքերը:

«Զինադադարէն ի վեր միջազգային կազմակերպութիւններու կողմէ ոչ մէկ հիմնական քայլ առնուած է Լեռնային Ղարաբաղի տագնապին խաղաղ լուծում մը ապահովելու ուղղութեամբ: Ներկայ կացութիւնը ցոյց կու տայ, թէ հարցին ի նպաստ խաղաղ լուծում մը գտնելու Ազրպէյճանի տուած ժամկէտը աւարտած է: Ազրպէյճանի ժողովուրդը իր հողերուն պիտի վերատիրանայ ռազմական միջոցներով կամ ալ պէտք է հաշտուի իր հողերը վերջնականապէս կորսնցնելու գաղափարին հետ», գրուած է հաղորդագրութեան մէջ:

Խորհուրդը դիտել տուած է, թէ Ազրպէյճանի պետութիւնը, երիտասարդական կազմակերպութիւնները եւ ոչ պետական կազմակերպութիւնները պէտք է այս գծով իրենց ջանքերը աշխուժացնեն:

ՐԱՆԴԻՊՈՒՄ՝ ՆԱԽԱԳԱՇՈՒԹԵԱՆ ԹԵՎԵՆՈՒ ԾՈՆ ԷՏՈՒԲԵՐՏԻ ԸՅՏ

«ԺԱՄԱՆԱԿՆ Է ԴԱՆՉՆԱԼՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ»

26 Մայիսին Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչներ հանդիպում մը ունեցան Միացեալ Նահանգներու նախագահութեան թեկնածու ծերակուտական ձոն էտուրրոզի հետ: Հանդիպումին ընթացքին քննարկուեցան ամերիկահայ յուժանքները յուզող հարցեր եւ յատկապէս՝ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման խնդիրը:

Հանդիպումին ընթացքին ծերակուտական էտուրրոզ անդրադարձաւ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման եւ Թուրքիոյ կողմէ Հայաստանի շրջափակումին: Ան յայտնեց, թէ Ցեղասպանութեան ճանաչումը կը նպաստէ Միացեալ Նահանգներու շահերուն՝ աւելցնելով. «Ժիշդ քայլն է, որ պէտք է առնել: Ժամանակն է ճանչնալու Հայկական Ցեղասպանութիւնը»:

Յանձնախումբի ատենապետ Բաֆֆի Համբարեան իր կարգին ծերակուտականին ուշադրութեան յանձնեց թուրքիոյ կողմէ Հայաստանի դէմ գործադրուող ապօրինի շրջափակումը, որ ուղղակիօրէն կը հակադրուի ամերիկեան «Մարքասիրական օժանդակութեան» օրէնքին: էտուրրոզ դիտել տուաւ, որ շրջափակումը ապօրինի է եւ պէտք է վերջ գտնէ, Ուաշինկթըն պէտք է Հայաստանի կողքին կանգնի եւ շրջանի բոլոր պետութիւնները պէտք է դիտան, որ ան Հայաստանին նեցուկ կը կանգնի:

Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչները գործուածութիւն յայտնեցին, որ էտուրրոզ խոր հակացողութիւն ցուցաբերեց Հայութիւնը յուզող հարցերուն նկատմամբ: Համբարեան դիտել տուաւ, որ «Հայերը Քալիֆորնիոյ մէջ կարեւոր քաղաքական ուժ են» եւ ուրախ ենք, որ՝ ծերակուտական էտուրրոզ, ինչպէս նաեւ այլ հանրային դէմքեր կը գիտակցին այս իրողութեան:

Յանձնախումբի կառավարական յարաբերութիւններու պատասխանատու Արտաշէս Քասախեան յայտնեց, որ նախագահութեան զլխաւոր թեկնածուներու հետ այս ձեւի հանդիպումները պիտի շարունակուին յառաձիկայ ամերիկաներուն եւս, որպէսզի ամերիկահայութեան ձայնը լսելի դառնայ նախագահական յանձնարարութիւններուն: «Հանդիպումները պիտի ունենանք թեկնածուներուն հետ եւ անոնց պիտի բացատրենք Հայաստանի ու ամերիկահայութեան դէմ ցցուած խնդիրները: Միտածանակ հանրութիւնը տեղեակ պիտի պահենք, թէ թեկնածուներուն կեցուածքը ի՞նչ է այդ հարցերուն նկատմամբ», եզրափակեց Քասախեան:

«ԱԶՐԱԿ»Ի ՄԷՉ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ  
Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազրպէյ» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատունը՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուակազմէն առնուագն օր մը առաջ, Միւս 26-ի ԵՐԵՎԱՆԻՑԵԱՆ, ԺԱՄԱՐ 5:00:  
ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

www.hamazkayin.com

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ  
Ձեզ կը հրաւիրեմ  
ՍԻՐԿԱՐԻ ՖԱԶԼԵԱՆԻ  
ԶՐԱՆԵՐԿԵՐՈՒ ՅՈՒՑԱՐԱՆԴԵՍԻՆ  
«ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿՆԵՐ»  
«Արթիւր Մաթոսեան» Արուեստի Կեդրոն - Մուկր շէնք  
Հայկազեան համալսարան - Բանթարի  
Յուգահաճեւր կը տեսն մինչեւ 20 Յունիս 2003:





# ՆԱՄԱՋԳԱՅԻՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ...

Շարունակում՝ 4րդ էջէն

Մ. Մ.- ձիւղ է, գանգառողներէն մէկն ալ տղաս է: Մեր կանոնադրին մէջ այդպիսի բան չկայ: Մենք պարզապէս կ'ապաւինինք ճեմարանականներու, եւ ոչ միայն ճեմարանականներու, ողջմտութեան. անոնց աղբալեանական զգացումին եւ շանթեան երկաթեայ տրամաբանութեան. երկուքին ալ՝ միաժամանակ: Մենք այդպէս գործած ենք, այդպէս ալ պիտի շարունակենք գործել: Կը կարծեմ, որ առաջին «չոք»էն կարճ ժամանակ ետք ամէն ինչ ամէն մարդու համար յստակ եւ ընդունելի կը դառնայ, որովհետեւ մասնագէտներու վկայութեամբ որեւէ գործումը ներկայ պայմաններուն մէջ կարելի լաւագոյն լուծումն է: Իմ պարագայիս գոնէ այդպէս պատահեցաւ. մենք թիւով ծանօթներու ալ. այսինքն՝ գոհունակութիւն գործողութեան ընծայած մենք առաւելութիւններուն համար եւ սրտին անկիւնը տեսապէս յուշուող մանր կսկիծ մը: Այս վերջինն ալ Ն. Փ. Ճեմարանի յարատեւութեան համար իւրաքանչիւր ճեմարանականի կողմէ վճարուելիք գինն է:

«Ա.»- Յարատեւութիւն. դուր, կ'երեւի, լաւատես էք. սակայն ոմանք կը կարծեն, թէ յաջորդ քայլը կալուածի վաճառքն է:

Մ. Մ.- Մեր կեանքին մէջ խոր արմատ նետած «քրիստոնէական» հարողակցութեան միջոցները ցամաքամասէ զամաքամաս աշխատելով ամէն ճիւղ ու սխալ լուր տարածած էին արդէն. յետ էի, թէ Ն. Փ. Ճեմարանի կալուածը արդէն ծախուած է. ես նոյնիսկ նոր տիրոջ անունը «գիտէի»: Դժբախտաբար մեր կեդրոնական վարչութիւնը լրատուական այդպիսի ցանցի արագութեան եւ կատարելութեան հետ չի կրնար մրցիլ, որպէսզի անոր կողմէ սփռուող զանազան ու գարմանազան «լուր»երուն ատենին հակազդէ: Ճեմարանը վաճառելու որոշում երբեք չէ կայացած. հիմա՛ ալ չկայ: Այսպէս յայն ալ տնտեսական նուազագոյն տրամաբանութիւնը ունեցող այդպիսի որոշում չի կրնար կայացնել: Քէճ ասիկա՛ է մեր տնտեսական խորհրդականներու կարծիքը: Այլ չստիպեք ենթակայական կարեւոր տուեալներուն մասին, որոնց մասամբ անդրադարձայ քիչ առաջ: Կան նաեւ տեղական քաղաքական պատճառներ, սակայն անոնք մեր անմիջական հետաքրքրութեան սահմաններէն ներս չեն:

«Ա.»- Այսինքն, ինչպէ՞ս կ'երեւակայէք Ն. Փ. Ճեմարանը ապագային:

Մ. Մ.- Ես ճեմարանը առանց աշակերտի չեմ կրնար երեւակայել: Իր ատենին՝ պատերազմէն առաջ ձեռնարկուեցաւ Անթիլիասի ճեմարանի հողամասի գնման, որովհետեւ Ն. Փայանճեանը յազմեցած էր. այսինքն գոյութիւն պիտի ունենային երկու ճեմարաններ: Ժամանակին շարժումը դէպի յետ էր: Պատերազմը եկաւ, աշակերտութիւնը նստաբաց եւ երկու ճեմարաններու միաժամանակ գոյութիւնը պերճանք դարձաւ: Այսօր սակայն «դէպի յետ» կամաց-կամաց կը վերածուի «դէպի քաղաք»ի. շարժման ուղղութիւնը կը փոխուի: Պէտք է թաղաքի կեդրոնը դրախտի վերածուելու վրայ է: Ես կ'ակնկալեմ, որ վարձակալը զայրոցը, Ն. Փ. Ճեմարանին պէս, մենք յարողակցութիւն ունենայ: Եւ այն ատեն պիտի ուզէի անսնել նախանձի բարերար ազդեցութիւնը մեր

դպրասէր հասարակութեան մօտ: Պատգամաւորական ժողովը որոշած է՝ «բաց պահել Ն. Փ. Ճեմարանի կալուածը կրկին իրեն վարձարան գործածելու կարելիութիւնը»: մինչ այդ՝ ան այլապէս պէտք է ծառայէ հայ դպրութեան եւ մշակոյթին:

«Ա.»- Չէ՞ք երազեր, ընկեր Մկրտիչեան: Մ. Մ.- Արգիլուած է, միթէ, երազելը: Մարտիկան՝ ալ երազ էր եւ վերածուեցաւ տոկուն իրականութեան՝ շնորհիւ լաւ ծրագրումի, կամքի գործուն արտայայտութեան, մարդոց ու մարմիններու հետեւողականութեան եւ յարատեւ աշխատանքին: Մեյնքըթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարանը կառուցուեցաւ պատերազմի ատեն, երբ Լիբանանի մէջ ամէն ինչ կը փչեր: Համազգայինը երբեք դիւրին որոշումներ չէ կայացուցած. անոնք միշտ յախուռն եղած են եւ իրենց փաստացի արդարացումը գտած են յետ գործադրութեան: Ն. Փ. Ճեմարանի մէջ մասը վարձու տալու որոշումն ալ ընթացիկ ու երկչոտ որոշում մը չէ:

«Ա.»- Ընկեր Մկրտիչեան, շնորհակալութիւն կը յայտնենք այս գրոյցից համար:

Պէտք է, 4 Յունիս 2003

### «ԱԶԳԱԿ»

#### ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«Ա.Զ.Գ.Ա.Կ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետևելու թիւերուն. 258526, 260115 եւ 241274:

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԼՈՒՍԻՆ ԱՊՏԱԼԵԱՍԻ մահուան Բ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Յունիս 2003, Նոր Մարաշի Մորթոք Զառահայկ Մանկանց Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՍԱՌԱ ՊՈՅԱԾԵԱՍԻ մահուան Բ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Յունիս 2003, Էջրեֆիէի Ա. Յակոբ Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՅՈՎԱԷՓ ԱԾՃԵԱՍԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Յունիս 2003, Ժուհիէի Ա. Յարութիւն Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՍԱՐԻ ԳԱԶԱՆՃԵԱՍԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Յունիս 2003, Ժուհիէի Ա. Յարութիւն Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

### ★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★

★ **ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ) Եթէ մարգանք ընելու վարժութիւնը բնական դարձած է ձեզի համար, այսօր զանգ մի՛ առնէք այս սովորութիւնը՝ փոքր յոգնութիւն մը պատրուակելով: Մարգանքը կենսական է ամէնուհ համար:

★ **ՅՈՒՆ** (21 Ապրիլին 21 Մայիս) Հակառակ հարցի մը անկիւնները կլորցնելու ձեռք բերել, որ կը վերաբերի ձեր ընտանիքին մէկ անդամին, պիտի չկարծեմք զայն համոզել: Օղի մէջ վէճ մը կայ կարծեք:

★ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսին 21 Յունիս) Եթէ հարց մը ունիք ձեր դրացիին կամ այլ անձի մը հետ, զգուշութեամբ վարուեցէք անոց հետ, որպէսզի գլխացաւ մը չունենաք: Անոց քիչ մը խնդրալարոյց պիտի ըլլան:

★ **ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսին 23 Յուլիս) Այսօր դրամական ոչ մէկ համաձայնագիր կնքեցէք: Եթէ ստիպուիք դրամ փոխ տալու կամ առնելու, յետագայէք, որովհետեւ յաջող էլք մը պիտի չունենայ:

★ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսին 23 Օգոստոս) Եթէ կը զգաք, որ անելի մը դիմաց կը գտնուիք, մի՛ մտահոգուիք, անմիջապէս ձեզի օգնողներ պիտի ըլլան: Մի՛ յուսահատիք, քաջութեամբ դիմակայեցէք որեւէ պատահար:

★ **ԿՈՅ** (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր) Հարկ եղած բաւարար ժամանակը չէք տրամադրեր փշոտ հարցի մը մասին մտածելու: Արագ ձեռով, հապճեպ ստեղծած ձեր լուծումը գոհացուցիչ պիտի չըլլայ:

★ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր) Ինքնուրոյն գաղափարներ ունիք, բայց իրագործելի չեն անոց, ուրեմն դիմեցէք ձեր շուրջը գտնուող փորձառու անձերու կարծիքին: Խոհեմ եղէք:

★ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր) Ձեզի ներկայացուած առաջարկները խաղ մի՛ նկատէք: Ձանցեք օգտուիլ առիթէն: Եղէք խոհեմ, տրամաբանող: Հարցերը լուրջի առէք, որպէսզի չզղջաք:

★ **ԱՆՆՆԱՌՈՐ** (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր) Հեռախոսութիւնը ձեզ պաղեցուցած է ձեր բարեկամներէն: Անոց պիտի ուզէիք, որ երբեմն իրենց որպիսութեամբ հետաքրքրուէիք եւ ձեր լուրերը փոխանցէիք:

★ **ԱՅՅԵՂՉԻՒՐ** (22 Դեկտեմբերին 20 Յունուար) Ձեր խնդրանքը՝ զուարմը վապահովելու անձ մը, պիտի ընդունուի շատ դիւրութեամբ, բայց ջանցեք չծանրաբեռնել ձեր պարտաւորութիւնը յաւելելով պահանջներով, այդ դրամ ըլլայ թէ այլ բան:


★ **ՏՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարին 19 Փետրուար) Հրատմոյթակը այսօր ձեզ պիտի դարձնէ յարձակունակ եւ անհանգուրժող՝ ձեր հանդիպած անձերուն դիմաց: Բայց մի՛ գարմանաք, եթէ անոցը վճարուած ձեզմէ: Քիչ մը փափկանկատ ու ներողամիտ եղէք:

★ **ՉՈՒԿ** (20 Փետրուարին 20 Մարտ) Ինչո՞ւ համար ընտանի անասուն մը բերած էք ձեր տունը, եթէ պիտի չխնամէք զայն պէտք եղած ձեռով: Ստիպուած էք անոր հոգ տանելու երկար ժամանակ զայն սուլնելու գուրս հանելով:

# ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՕՏՆ / ՅՈՒՅՆԱՆՆԵՐ / ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՁ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆԸ ԲԱԶԱԼԵՐՈՂ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆ



Լիբանանի մշակոյթի նախարարութեան հովանաւորութիւնը վայելող նախաձեռնութեամբ մը գերմանական մշակութային «Կէօթէ» հիմնարկը այս օրերուն կը կազմակերպէ աշխատանքային հանդիպումներու շարք մը, որոնք կը միտին բարելաւել լիբանանեան հանրային գրադարաններու ծառայութիւնները եւ սերտացնել ընթերցող - գրադարան կապը: Լիբանանի տարածքին բազմաթիւ հանրային գրադարաններէն կը վրայ տարածուող այս ծրագիրը կը բաղկանայ աշխատանքային երէք հաւաքի պիւմներէ, որոնք յատկացուած են մարզերու համար հանրային գրադարաններու կառուցման համար:

աշխատանքային հանդիպումներուն երրորդ տեղի կ'ունենայ այսօր, առաւօտեան ժամը 9:30էն մինչեւ երեկոյեան ժամը 3:00, «Կէօթէ» հիմնարկին մէջ:

Ֆրանսէի լիբանանահայ գրադարանի պատասխանատու Լիսա տը Վոսի առաջնորդութեամբ տեղի ունեցող այս աշխատանքային հանդիպումներուն կը մասնակցին մշակոյթի նախարարութեան կողմէ ստեղծուած 37 հանրային գրադարաններու պատասխանատուներ: Ծրագիրը հիմնականին մէջ կը նպատակադրէ 4-6 տարե-

կան մանուկները մղել ընթերցանութեան եւ պանոնք վարժեցնել գիրքերու աշխարհին հետ հաղորդակցութեան: Աշխատանքային հանդիպումները մասնակցողներուն կու տան գաղափարներ՝ մանուկներու պատմութիւնները կերպերուն, գիրքերու կարդալ տրվեցուն եւ թատերական փոքր ներկայացումներ կազմակերպելու առումով:

**ՕՊԵՐԵՒՈՅՑ**

ՈՒՐԱՄԹ, 6 ՅՈՒՆԻՍ 2003

**ՊԵՅՐՈՒԹ ԱՐԵՒՈՏ**

**ՋԵՐՄԱՍԻՏԻԱՆ ՅԵՐԵԿ՝ 30°C**

**ԳԻՇԵՐ՝ 22°C**

**ԽՈՆԱՒՈՒԹԻՒՆ՝ 53%**

**ԱՅՍՕՐ**

- Հաւաքական ցուցահանդէս՝ «Ա.Ֆրաք», «Աստիսախոն տը Պէյրոս փուր լը տելեֆոն մասին» կեդրոնին մէջ, մինչեւ 8 Յունիս:

- «Ֆեսթիվալ Իրախան» երգահանդէս Սիւզիա Ռիզոնէ (սոփրանօ) եւ Ռոպերթ Քալի (թեյնոք), ժամը 20:30ին: Աստուի «Թան էլ Ֆրանսի» մէջ:

- Նկարչական ցուցահանդէս՝ «Թեմ վիուզ», «Էսփաս Էս. Տե.» ցուցասրահ, մինչեւ 28 Յունիս:

- Թատրոն «Սոյո», ժամը 20:30ին, «Ալ մատինա» բաւերասրահ, մինչեւ 21 Յունիս:

- Ցուցահանդէս՝ «Թուր քարթիս», Ֆրանսական Մշակութային կեդրոնին մէջ, մինչեւ 13 Յունիս:

- Գորգերու ցուցահանդէս՝ «Թափի տիւ Քոբազ», «Սըրսոք» բանգարանին մէջ, մինչեւ 12 Յունիս:

- Ձեռագործ արուեստի ցուցահանդէս՝ «Երանժ մեյանժ», Միշէլ Թաուիլի յարգարումի արուեստի գործերը, «Էսփաս Էս. Տե.» ցուցասրահ, մինչեւ 7 Յունիս:

## ԱԶԳԱԿ 50 ՏՄԱՐԻ ԿԱՌԱՅՈՒՄ

**20ՐԱՎԱՐ ՆԵԿԻՊ ՇՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԷ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ**

«Յոսաբեր (2 Յունիս) կը գրէ. Աղեքսանդրիոյ գաղութին անգամները վարչապետ Նեկիպիս յղած էին հետազոյց, որով իրենց հաւանութիւնը կը յայտնէր Եգիպտոսեան օտարականներու ապահովութեան մասին իր ըրած յայտարարութեանց, զորս կրկնած էր նաեւ հազարապետ Կամալ Ապտալ Նասր: Այդ հետազոյց Աղեքսանդրիոյ հայ գաղութը ուժ կու տար նոր վարչաձեւին եւ իր երկրորդ հայրենիքին՝ Եգիպտոսի արդար դատին:

Պատասխանելով այս հետազոյցին՝ գոր. Նեկիպի հայ գաղութի անդամներուն իր կողմէ պատուիրակ զրկեց միաբայ Մուսթաֆա Կենետիկ՝ հիւսիսային շրջանի հրամանատարը, որ երկէ գիշեր ժամը 9:00ին հաղորդեց վարչապետին շնորհակալութիւնները, Ազգ. առաջնորդարանին մէջ:

Միաբայ Մուսթաֆա Կենետիկը ընդունեցաւ հայ գաղութին երեւելիներուն եւ կրօնական ներկայացուցիչներու կողմէ:

Այցելելի ետք առաջնորդարան, վարչապետին պատուիրակը լսեց կրօնաւորի մը յուզիչ մէկ ճառը, որ կարասայտէր Աղեքսանդրիոյ հայութեան յարումը նոր վարչաձեւին եւ անոր նպատակներուն, ընդգծելով, որ մըրոջ երկրին բնակչութիւնը պատրաստ է գոհուելու Եգիպտոսեան ազգային բաղձաբերութիւնը իրենց համար:

Իր կարգին, միաբայի խօսեցաւ կարճ ուղերձ մը, որ ընդունուեցաւ որոտընդոտ ծափերով: Հիւսիսային շրջանի հրամանատարը շնորհակալութիւն յայտնեց իրենց եղած ընդունութեան եւ այն զգացումներուն համար, զորս հայերը կը տածէին Եգիպտոսի հանդէպ: Վարչապետին շնորհակալութիւնները հաղորդելի ետք հայ գաղութի անդամներուն, միաբայը մեկնեցաւ բուն ծափերու մէջ:

**ԱՅՍՕՐ՝ 6 ՅՈՒՆԻՍԻՆ**

■ 1903 - Ծնունդ աշխարհահռչակ երգահան եւ խմբավար Արամ Խաչատուրեանի (Թիֆլիս), մեկը՝ ժամանակակից երաժշտութեան գլխաւոր դէմքերէն: Նշանակոր են իր ջութակի, թաւջութակի եւ դաշնակի քունքերէնը, «Բ. Համանուագը», «Երջանկութիւն», «Գայեանէ» եւ «Սպարտակ» պարային շարքերը, եւ այլն:

■ 1904 - Մահ Կայծակի (Վաղարշակ Պաղտասարեան):

■ 1922 - Մահ բանաստեղծ Ինտրայի (Տիրան Զրաբեան):

**ԽԱԶԲԱՌ ԹԻԻ 5454 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ**

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՇՈՐԻՉՈՒԿԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵՍ
1. Կաթի բնասպիտ:	1. Թագ - Ասիական դրամանիշ - Չաչ:
2. «Արարտ» ֆուլթայլի կազմին նախկին անուանումներէն - Անհատ:	2. Մետաքս թել - Արական օտար անուան:
3. Ռուսներու տեսակ - Գոմ - Չայնանիշ:	3. Զրածնային ուղմերի թիւրախ՝ ճափոնական քաղաք - Էական բայ:
4. Կուպր - Կարծր քար տեսակ:	4. Կրկնուած տուներ - Ո՛ր - Քաղցր նիւթ:
5. Զրուռի - Ոլուռ:	5. Իգական օտար անուան - Շէն:
6. Նախահօր կողակիցը - Անտեղեակ:	6. Առաջուան - Ական:
7. Կղպանքի ծակ - Գեղատեսիլ տերեւներով բոյս:	7. Արական օտար անուան - Կառափ:
8. Ստացական ածական - Կրկնուած բաղաձայններ:	8. Ժողովուրդային - Տղամարդ:
9. Երակէն արիւն հանող գործիչ:	9. Որ - Իգական օտար անուան - Թոքային հնչեղ արտաբերում:
10. Հերիւն - Շարունակ:	10. «Նահապետ» գրչանունին տէրը - Քաջ:
11. Մանրութիւն բարձրացնող մարդիկ:	11. Դիտող - Դողդոջուան:



**ԹԻԻ 5453 ԽԱԶԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ**

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2	3	4	5	6	7	8	9	10	11	12
3	4	5	6	7	8	9	10	11	12	13
4	5	6	7	8	9	10	11	12	13	14
5	6	7	8	9	10	11	12	13	14	15
6	7	8	9	10	11	12	13	14	15	16
7	8	9	10	11	12	13	14	15	16	17
8	9	10	11	12	13	14	15	16	17	18
9	10	11	12	13	14	15	16	17	18	19
10	11	12	13	14	15	16	17	18	19	20
11	12	13	14</							

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



# ԱՇԽԱՐՀ



## ՖՈՒԹԳՈՒԼԻ ԲԱՐԵԿԱՄՍԿԱՆ ՄՐՅՈՒՄ

### ՎԱՂԸ

### Հ.Մ.Ը.Մ. - ՌԱՍԻՆԿ ԺՈՒՆԻԻ

Վաղը՝ Շաբաթ, երեկոյեան ժամը 5:00ին, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը բարեկամական մրցում մը պիտի կատարէ Ռասինկ ժունիէի դէմ, առ ի պատրաստութիւն բաժակի մրցաշարքին Նըժմէ - Թատամն Սուր յաղթականին դէմ կիսաարտական տաք ճակատումին:

Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներէն կը սպասուի վաղը ուղղուիլ դաշտ եւ թէ՛ ներկայութեամբ, թէ՛ տնտեսական օժանդակութեամբ քաջայերէն խումբը, որ կարիքը ունի բոլորիս անվերապահ պօրակցութեան:

## ՓՈՒՆԿ ՓՈՒՆԿ

### Հ.Մ.Ը.Մ. ԲԱԻԱԿԱՆ ԼԱԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ Կ'ԱՐՁԱՆԱԳՐԷ

Լիբանանի փինկ փոնկի բաժակի մրցաշարքին, որ տեղի կ'ունենայ Մոն Լա Սալի մէջ, երէկ Հ.Մ.Ը.Մ. Պէյրութի մարզիկները արձանագրեցին բաւական յաւարդիւնքներ:

Աղջկանց մրցումներուն, Լարա Քէշէպաշեան 4-2 արդիւնքով պարտութեան մատնեց Ռուպա Պրսէյպէր, Նոէլ Քէշիշեան՝ Փաթրիսիա Համը (3-0), իսկ Լիպա Պարիքեան 4-2 արդիւնքով պարտութիւն մը կրեց Ղատա Ըլէյլաթէն:

Յատաշիկայ Երկուշաբթի, 9 Յունիսին, Լարա բաւական կարեւոր մրցում ունի կատարելիք, երբ ճակատի Ղատա Ըլէյլաթի դէմ (ժամը 5:30ին):

Տղոց մրցումներուն, Ռապիկ Շեմեմեան 3-2 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Յասի Քիուանէն, յաջորդաբար պարտութեան մատնեց Ուաէլ Մէյթետտի (3-0) եւ Պիլալ Աշուրի (3-0):

Վաղը՝ Շաբաթ, ժամը 3:30ին, Ռապիկ կարեւոր մրցում մը ունի կատարելիք Մոհամէտ Հապաշի դէմ:

Հ.Մ.Ը.Մ. Պէյրութի մարզիկներէն Մալէք Թաուիլ արձանագրեց երկու յաղթանակ, յաջորդաբար պարտութեան մատնելով Մարք Արէիք (3-0) եւ Պիլալ Սաֆին՝ 3-0: Ան վաղը, միեւնոյն ժամուն կը ճակատի Ֆէտի Էսիսի դէմ:

## ԾԱՆՈԹԱՐՁՈՒԹԻՒՆ

### ՀԱՅԱՍՏԱՆ ՇԱՀԵՑԱԻ ԵՐԿՐՈՐԴ ՊՐՈՆՋ ՄԵՏԱԼԸ

Մեքսիքայի մէջ տեղի ունեցող ծանրաբարձութեան աշխարհի երիտասարդներու ախոյեանութեան մրցաշարքին, Հայաստանի շահեցաւ իր երկրորդ պրոնջ մետալը, շնորհիւ Գէորգ Գալիթեանի (Գիւմրի), որ 77 քկ. դասակարգին մէջ բարձրացուց 335 քկ. (152,5 քկ. + 182,5 քկ.):

Առաջին պրոնջ մետալը շահեցաւ Արթուր Դանիելեան (Արմաւիրէն):

## ՄԱՆՉԵՍԹԸՐ ԵՈՒՆԱՅԹԸՏ

### ՊԵՔ ՀԱՄ ԿԸ ՄԵԿՆԻ, ՌՈՆԱԼՏԻՆԻՕ ԿԸ ԺԱՄԱՆԷ՞

Բրիտանական մամուլին համաձայն, պրապիցի Ռոնալտինիօ համաձայն է միանալու Անգլիոյ ախոյեան Մանչեսթըր Եունայթեդի:

Ըստ «Սան» օրաթերթին, Մանչեսթըրի պատասխանատուներէն Փիթըր Բենիթը Փարիսի մէջ հանդիպում ունենալէ ետք մայրաքաղաքի կայմին պատասխանատուներուն հետ, համաձայն գտնուած է 23 տարեկան Ռոնալտինիօյի փոխանցման համար վճարել շուրջ 15 միլիոն տոլար:

Ըստ շրջան ընող տարաձայնութիւններուն, Ռոնալտինիօն իր կայմին միացնելով Մանչեսթըրը մտադիր է «ծախել» Տէյլիտ Պեքհամը, պրապիցիին իր վճարելիք գումարին աւելի քան եռապատիկը գանձելով (շուրջ 50 միլիոն ամերիկեան տոլար):

28 տարեկան Պեքհամով ամէնէն աւելի հետաքրքրուած խումբերն են Պարսելոնա եւ Ա.Սէ. Միլան:

«Օլտ Թրէֆորտ»էն չհեռանալու գաղափարին համամիտ չէ նաեւ Տէյլիտի հայրը՝ Թէտ, որ կ'ըսէ. «Իր պատանեկութիւնը Մանչեսթըր Եունայթեդի մէջ անցուցած Պեքհամ չի ծրագրեր Սպանիա կամ Իտալիա մեկնիլ»:

Ներկայիս կը խօսուի նաեւ Ռէալ Մատրիտի մասին, սակայն այս բոլորը՝ առանց Պեքհամի ներկայութեան, նկատի ունենալով որ ան իր կնոջ է երկու պատկերներուն հետ կը գտնուի Միացեալ Նահանգներ: Պեքհամ կ'ըսէ, թէ արձակուրդէն վերադարձին այս ուղղութեամբ յանկուրդէն թացատրութիւններ պիտի տայ:

Նշենք, թէ Պեքհամ անցեալ ամառ մինչեւ 2005 թուականը պայմանագրութիւն մը ստորագրած էր անգլիական խումբին հետ:

## ԹԵՆԻՍ. ՌՈՒՆԱՆ ԿԱՐՈՍ

### ԺԻՄԹԻՆ ՇԵՆԷՆ ՏԱՊԱԼԵՑ ՍԵՐԵՆԱ ՌԻԼԻԸՍՍԸ

Վաղը Ռոյան Կարոսի աղջկանց արտականը պիտի ըլլայ գլուտ պեյճիքական, նկատի ունենալով, որ երէկ ժիւսթին Հենէն եւ Քիմ Բլիսթըրը ապահովեցին արտական մրցումին իրենց տոմարը:

Հենէն մրցաշարքէն դուրս ձգեց աշխարհի թիւ 1ը՝ ամերիկացի Սերենա Ուիլիքսը, արձանագրելով՝ 6 - 2, 4 - 6 եւ 7 - 5 արդիւնքով յաղթանակ մը. մրցումը տեւեց 2 ժամ եւ 20 վայրկեան:

21 տարեկան Հենէն, որ մրցումէն ետք իր ձեռքերը վեր բարձրացուցած ոտնեց իր արձանագրած այս յաղթանակը, իր ասպարէզին ընթացքին երրորդ անգամ ըլլալով էր, որ պարտութեան կը մատնէր Սերենան:

Մինչ Հենէն կը տօնէր իր յաղթանակը, համակիրները դժգոհութեան բացագանչութիւններով կ'ընդունէին ամերիկացիին պարտութիւնը:

Աւարտականին, Հենէն պիտի ճակատի Քիմ Բլիսթըրը դէմ, որ 7 - 5 եւ 6 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց ռուս Նատիա Փեթրովնան: Մրցումը տեւեց 1 ժամ եւ 10 վայրկեան:


Քլիսթըրը արտականի մրցումէն մէկ օր ետք պիտի տօնէ իր ծննդեան 20րդ տարեդարձը:

Տղոց կիսաարտական հանգրուանի մրցումներուն, այսօր արձանագրեցի Կիլերմօ Քորիա կը ճակատի հոլանտացի Մարթին վերքերքի դէմ:

Կիսաարտական երկրորդ ճակատումը պիտի ըլլայ գլուտ



Ժիւսթին Հենէն



Քիմ Բլիսթըրը

սպանական, նկատի ունենալով, որ 3րդ դասուած Խուան Բար-

լոս Ֆերերօ պիտի ճակատի Ալպէր Քոսթայի դէմ (9րդ):

## ԷՆ. ՊԻ. ԷՅ. - ՄԻՐՏԱԿԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

### ՍՓԸՐԶ - ՆԷԹՅ՝ 1-0

Էն. Պի. Էյ.ի աւարպական ճակատումի առաջին հանդիպումին, որ փեղի ունեցաւ երէկ, Սան Անթոնիօ Սփըրզ 101-89 արդիւնքով դարպութեան մասփնեց Նիւ ձըրզի Նէթը:


Նակառակ անոր որ Թիմ Տանքըն առաջին քորթըրին նշանակեց միայն երկու կէտ, սակայն հեպոզեպէ ինքզինք վերագրեց ինքնին մրցումին արարքը նշանակեց 32 կէտ եւ 20 օխտատումը: Նէթը իր վերջին դարպութիւնը կրած էր անցեալ Ապրիլին, այդ ալ Միլուոքի Պարսէն, Ա. հանգրուանի իր կատարած մրցումին (յետ երկարածգման ընթացքին):

Սփըրզ, որ վերջին հինգ փարիներուն միայն մէկ անգամ փոխուցում փոխացած է, յարդեցաւ օգտուիլ նաեւ Տէյլիպ Ռոտինարնի բացառիկ խաղարկութեան. ան նշանակեց 14 կէտ:

Արեւելեան շրջանի ախոյեան խումբին՝ Նէթը մարզիկներէն ձէլարն Քիպ չփորաւ իրմէ սոյաւտածը. ան նշանակեց միայն փար կէտ: Անոր կազմը թէն յարդեցաւ առաջին քորթըրին փոխադրել Սփըրզի վրայ, սակայն դաշտին փերերը շնորհիւ Ռոտինարնի յաջողեցան Ա. կիսախաղը արարել 42-42:

Եօր մրցումէ չորս յաղթանակ արձանագրող խումբը դիպի հանդիսանայ Էն. Պի. Էյ.ի ախոյեան:


Երկրորդ հանդիպումը փեղի փոխի ունենայ վաղը՝ Շաբաթ:



Թիմ Տանքըն

## ԹԵՆԻՍ

### ՍԱՐԳՍԵԱՆԻ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ



Հայաստանի յաւագոյն թենիսիստ Սարգիս Սարգսեան, որ անցնող քանի օրերուն Երեւան կը գտնուէր, մայրոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, թէ բաւական լուրջ աշխատանք կը տանի ամէն գնով յաւարդիւնքներ արձանագրելու համար 2003 տարուան երրորդ կրան շիէմի մրցաշարքին՝ Ուիմպլըտընի համար: Ան կ'աւելցնէ, որ պիտի փորձէ շատ աւելի յառաջ երթալ Ռոյան Կարոսին, ուր Բ. հանգրուանէն իսկ դուրս մնացած էր: Ան աւելցուց, որ խոտի վրայ տեղի ունեցած մրցումները աւելի դժուար են՝ քան՝ հողի վրայ:

Սարգսեան կ'ըսէ, որ եթէ առիթը ներկայանայ, կը փափաքի Հայաստանի հաւաքականին մաս կազմել:

Անդրադարձալէ ետք Անտրէ Ակասիի եւ Դաւիթ Նալպանտեանի հետ իր յաւաքերութիւններուն, Սարգսեան նշեց, որ դժբախտաբար առանց հսկայական գումարներու դժուար է յառաջիմութիւն արձանագրելը:

Ան ըսաւ, թէ կարեւոր փորձերու եւ գործնական մրցումներու պակասին պատճառով է, որ Հայաստանի մարզիկները ճախող արդիւնքներ կ'արձանագրեն:

Իր մասին անդրադարձալով, ան ըսաւ, թէ ինքլաւ քայլ մը առած է մեկնելով Միացեալ Նահանգներ:

Երբ փակելով, ան ըսաւ, թէ յոյսով է, որ տակաւին երէքէն չորս տարի կրնայ թենիսի դաշտերուն վրայ մրցումներ կատարել եւ այդ մէկը մի՛շտ՝ Հայաստանի անունով:

## ԿՈՓԱՄԱՐՏ

### ԼՈՒԻՍ ՄՏԱԴԻՐ ԶԷ ԹԱՅՍԸՆԻ ԴԷՄ ՃԱԿԱՏԵԼՈՒ

Կոփամարտի ծանր կշիռի աշխարհի ախոյեան Էնթուս Լուիս Էրթըք մտադիր չէ անգամ մը եւս ճակատելու ամերիկացի Մայք Թայսընի դէմ. կը յայտնէ բրիտանացի անգամ «Տէյլի Էքսփրէս» օրաթերթը:

Տարի մը առաջ Մեյքիսի մէջ (Մ. Ն.) Թայսընը պարտութեան մատնած 37 տարեկան ախոյեանը կ'ըսէ. «Անոր ծանախը անցած է այլեւ, որովհետեւ ան կը վախնայ ինձմէ, Վատաբար ան կ'երապէր պարտութեան մատնել պիտ, բայց անոր երապկեքը չ'իրականացան»:

Յատաշիկայ Յունիս 21ին, Լուիս Լուս Անձելը պիտի մէջ (Մ. Ն.) պիտի ճակատի Քըրք ձոնսընի դէմ:

●ԿՈՓԱՄԱՐՏԻ ծանր կշիռի աշխարհի ախոյեան Էնթուս Լուիս Էրթըքը Էվանսըր Հոլիֆիլ յառաջիկայ Հոկտեմբեր 4ին, Նիւ Եորքի մէջ (Մ. Ն.) ճակատում մը պիտի ունենայ իր ապակիցին՝ Ռոյ ձոնսընի դէմ, կոփամարտի աշխարհի ախոյեանութեան գծով:

40 տարեկան Հոլիֆիլ, որ պիտի փորձէ հինգերորդ անգամ ըլլալով կոփամարտի աշխարհի ախոյեան հանդիսանալ, կ'ըսէ, թէ իր վիրաւոր ուր այժմ բաւական ապաքինած է:



Էնթուս Լուիս

ԸՍՏ ԱՊՈՒՅԻԻ

ԻՐԱՆ ԴԺՈՒԱՐ ՇՐՋԱՆ ՄԸ Կ'ԱՊՐԻ

Իրաքի եւ Աֆղանիստանի մէջ աներկեան ուժերու ներկայութիւնը, ինչպէս նաեւ Իրանի մէջ քաղաքական անել կացութիւնը...

Մ. Նահանգները նկարագրելով իրբէ «անսահմ կերպով գործող ուժ մը», ան ըսած է, որ Իրան պէտք է «բոլոր միջոցները օգտագործէ, որպէսզի աներկեան ուժերուն որեւէ պատրուակ չտայ, նոյնիսկ եթէ անոնք պատրուակի պէտք չունին...»

«Մէկի համար լաւագոյն լուծումը նախագահ խաբէմի կողմէ ընթացքի մէջ դրուած ժողովրդավարութեան ամրապնդումն է, ամրապնդելու համար ժողովուրդին եւ ղեկավարութեան միջեւ կապը»:

Ամերիկեան սպանալիքներուն հետ թափ ստացած է լարուածութիւնը Իրանի գլխաւոր կողմերուն միջեւ՝ խաբէմի հաւատարիմ բարեկարգչականներուն, որոնց հակակշիռին ենթակայ է խորհրդարանը եւ պահպանողականներուն, որոնք իրենց լիազօրութիւնները կ'օգտագործեն օրէնսդիր մարմիններու, դատական մարպին, ապահովութեան ուժերուն եւ պետական լրատու աղբիւրներուն ճամբով:

Ապրիլի ըսած է, որ «լաւատեան» կը մնայ: «Երկար տեւողութեան վրայ թերեւս խաբէմին կամ եւ հոն պիտի չըլլայ: Սակայն նախագահին գաղափարներն ու լոպուզները այժմ խորապէս խարսխուած են իրանեան ընկերութեան մէջ», աւելցուցած է ան:

ՈՌՍԻԱ Կ'ԸՍԷ, ԹԵ ԻՐԱՆԻ ՇԵՏ ԿՈՐԻՉԱՅԻՆ ՍԱՐՁԻՆ ՄԵՋ ԿԱՊԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Միւս կողմէ, Ռուսիա երէկ յայտնած է, թէ Իրանի կորիզային վառելանիւթ պիտի հայթայթէ նոյնիսկ եթէ անիկա ՄԱԿի քննիչներուն արտօնութիւն չտայ երկրին որեւէ մէկ վայրը այցելելու՝ միջազգային մտահոգութեանց մարտահրաւէր ուղղելով:

Մոսկուայի նորագոյն արտադատութիւնները աւելի եւս ճնշում բանեցուցին Իրանի գծով Արեւմուտքին հետ անոր յարաբերութեանց վրայ:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբերը նաեւ շեշտած է, որ Մոսկուա կ'ուզէ, որ Իրան ընդունի ՄԱԿի քննիչներու աւելի խիստ հակակշիռը:

Մինչ այդ, Իսրայէլի արտաքին գործոց նախարար Սիւլվան Շալոմ երէկ ռուսական «Իզվեստիա» օրաթերթին հետ հարցազրոյցի մը ընթացքին յայտնած է, թէ Իրան մինչեւ 2006 հաւաքական բնաջնջումի պէնքեր պիտի ապահովէ:

Շալոմ երկուշաբթի օր Ռուսիա ենօրեայ այցելութեան մը պիտի ձեռնարկէ:

(ԱՅՓ)

ՉԵՉԵՆԻՈՅ ՄԵՋ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ ԽԼԵՅ 18 ՁՈՐ ԵՒ 13 ԿԻՐԱԿՈՐ



Չեչենիոյ մահացու տագնապը նոր փոփոխութիւններ էրէկ երէկ անձնասպանական գործողութեան մը պատճառով:

Չեչենիոյ մէջ, ռուսական օդուծի անդամներով լեցուած օթոպիւսի մը մէջ տեղի ունեցած պայթումը տոնուապ 18 փոխ 13 վիրաւոր խլած է:

Կին մը, որ բժիշկներու յատուկ ձեռնարկ տարապ մը հագուած էր, իր մարմինը կապուած պայթուցիկ նիւթերու իր գոտին պայթեցուցած է, մինչ օթոպիւսը Հիւսիսային Օսեթիոյ Մոլոտոք քաղաքէն կը հեռանար ուղղուելու համար ռուսական օդուծի մօտակայ խարխիսի մը:

Պատահապէս արարքը ահաբեկչութիւն որակած են: Ո'չ ոք ստանձնած է գործողութեան պատասխանատուութիւնը:

ՄԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՆՑ ԲՈՆԱՐԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Միւս կողմէ, Ռուսիոյ մէջ կենսամակարդակին մասին տարեկան տեղեկագիր մը, որ երէկ հրատարակուած է, յայտնած է, թէ Չեչենիոյ մէջ մարդկային իրաւանց բռնաբարումները կանգ առնելու որեւէ նշան ցոյց չեն տար:

Ռուսիոյ մարդկային իրաւանց մարպին գլխաւոր պատասխանատու Օլէկ Միլոնով ըսած է, թէ յատկապէս մտահոգ է այսպէս կոչուած «մաքրագործում» գործողութիւններով, որոնց ընթացքին ռուսական ուժեր գիւղեր ամբողջովին կը փակեն եւ տուն առ տուն անջատողական փնտնանք կը փնտռեն:

Մարդկային իրաւանց պաշտպաններ կ'ըսեն, թէ ձեռքարկուած չեչեն տղամարդոց մէջ շատեր կ'անհետանան այդ գործողութիւններէն ետք:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԸ ՈՂՋՈՒՆԵՅ ԱՔԱՊԱՅԻ ...

Շարունակուած Ա. Էջէն ԱՐԱՖԱՐԹԵՐԱՄԱՍ



Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաթ Արաֆատ, որ մեկուսացուած է եւ շրջանցուած Իսրայէլի ու Ուաշինկթընի կողմէ, թերահաւատութեամբ ընդունեց Իսրայէլի վարչապետը Արիէլ Շարոնի յայտարարութիւնը եւ խոստումները: Արաֆատ ըսաւ, որ ցարդ Շարոն փոքր է շար խոստումներ, որոնք բոլորն ան սակայն մնացած է խօսքերու ծիրին մէջ եւ գեղնի վրայ ոչինչ իրագործուած է: Արաֆատ ըսաւ նաեւ, որ ինչ իմաստ ունի եւ ինչ արժէք կը ներկայացնէ, եթէ Շարոն քանդէ քանի մը շարժական բնակարաններ ու յայտարարէ, թէ ամբողջ բնակեցման վայր մը քանդած է:

Պաղեստինցի վարչապետը Մահմուտ Ադոյաս Արաֆատի ոյիպի գեկուցէր Արադայի եւ Շարոնի Շէյխի վեհաժողովներուն մասին:

Արադայի եւ Շարոնի Շէյխի վեհաժողովները խիստ ոճով դատարարութեան նաեւ Եփրատի Իսլամական Եղբայրութեան կողմէ, որ կոչ ուղղեց Պաղեստինցիներուն մերձելու զինեալ յայտարարին վերջ փայտ կոչելը: Կազմակերպութեան կողմէ հրատարակուած յայտարարութիւնը կը նշէր, թէ Պուշի հովանաւորած ժողովներուն թիրախն է սոյաններ ինքիֆապան, վերջ փայտ Իսրայէլի դէմ յայտարարին. երաշխատրեյ ադախովութիւնը սինական ղեկարարութեան, ինչոյն նաեւ միջուկային պաղեստինցի իրաւորները:

(ԱՅՓ)

11Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԱՅԱՐԵԿՉԱԿԱՆ ԱՐԱՐՔԻՆ ԳԾՈՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՄԸ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ՓԱՐԻՉԻ ՄԵՋ
Մարոքցի մը երէկ ձեռքարկուած է Փարիսի մէջ, իբրեւ կասկածելի՝ 11 Սեպտեմբերի ահաբեկչական արարքին գծով, հաղորդեց «ԱՅՓ» լրատու գործակալութիւնը:
Յրանսական գաղտնի սպասարկութեանց հաղորդումներուն համաձայն, 34 տարեկան Քարիմ Մեհտի կապեր ունեցած է Գերմանիա հաստատուած իսլամական արմատական խմբակցութեան մը հետ, որ օժանդակած էր 11 Սեպտեմբերի գործողութեան:
Տէ. Էս. Թէն. (Ֆրանսական գաղտնի սպասարկութիւնը) Մեհտին ձեռքարկուած է Փարիսի «Շարլ Տը Կոյ» օդակայանին մէջ:

ՄԱԿԻ ԵՐԵՔ ԴԵՏԵՐ ՊԱՏԱՆԴ ԲՈՆՈՒԱԾ ԵՆ

Վրաստանի մէջ ՄԱԿի երեք դէտեր երէկ առաւօտուն պատանդ բռնուած են իրենց թարգմանին հետ՝ երկրին Աբխազիոյ հետ սահմանին վրայ:
Վրացի բարձրաստիճան պաշտօնատար մը յայտնած է, թէ 8 հոգինց խմբակ մը՝ ռուս խաղաղարար 4 փնտնորներ, թարգման մը եւ ՄԱԿի 3 դէտեր անձանօթներու կողմէ բռնուած են: Ռուսական ուժերը ահապահ ինչեցուցած են՝ ապատ արձակուելէ ետք:
Գերմանիոյ պաշտպանութեան նախարար Փիթըր Շթրոյք երէկ Պերլինի մէջ յայտնած է, թէ կ'ենթադրուի, որ անոնք արխապներու կողմէ պատանդ բռնուած են:
Պաշտպանութեան նախարարութիւնը նախապէս ըսած է, որ պատանդներուն մէջ 2 գերմանացիներ կան:

ԽՈՐՀՐԴԱԿՈՐ ԼԵՌՆԵՐ

Շարունակուած՝ 7րդ էջէն
րիկեան այս երաժշտութիւնը: Լիվրփոլի նուագախումբին կատարողութիւնը հարուստ է գունեւանգներով, ինչ որ կը յարմարի Այան Յովհաննէսի պանգերու եւ շեփորի մենսուագներու նկատմամբ տաժած յատուկ սերին: Շուրջ աշխուժօրէն եւ շնորհալի կերպով կը ղեկավարէ նուագախումբը՝ արդարօրէն վերաբերելով Այան Յովհաննէսի մերթ ընթրու, մերթ հաստատական խաչերուն հետ:
Այան Յովհաննէսի երկրորդ համանուագին ձայնագրութեան կ'ընկերակցին լեռներու բնաբանին շուրջ հիւսուած երկու այլ համանուագներ. անոր 66րդ համանուագը, որ կը կրէ «Հիմն թու կլեիլը փիթ» (շարական նուիրուած առուցեալ գագաթին) վերնագիրը եւ 50րդ համանուագը, որ կը կոչուի «Մաունթ Սէնթ Շելենկ» (Սուրբ Շելենկ լեռ): Ամփոփ սկաւառակը կը պարունակէ նաեւ այլ կտոր մը՝ «Սթորմ ան Մաունթ Ուայլտըթ» (Փոթորիկ՝ Ուայլտըթ լեռան վրայ), զոր երաժշտը յօրինած է իր երիտասարդութեան:
«Հիմն թու կլեիլը փիթ» համանուագը յօրինուած է երիտասարդական նուագախումբի մը համար: Անոր առինքնող միակ բաժինը միջանկեալ յորդորակն է (անտանթէ), սիրերգ մը, զոր Այան Յովհաննէս նուիրած է իր կնոջ՝ Հիւսարի:
Սակայն «Մաունթ Սէնթ Շելենկ»ը նոյնքան արժէքաւոր գործ մըն է, որքան «Միսիլիլիս մաունթըն» համանուագը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՐԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԻ ԷՉ 5

ՈՒՇ ԿԱՄ ԿԱՆՈՒԽ ԻՐԱՔԻ...

Պիլքս ըսաւ նաեւ, որ ամերիկեան ու բրիտանական տեղեկագիրները, որոնց բովանդակութեան հիման վրայ Իրաքի դէմ պատերազմ հռչակուեցաւ, կասկածելի տեղեկութիւններ կը պարունակեն: Պիլքս աւելցուց, որ երբ ՄԱԿի քննիչները Իրաք կը գտնուէին, այդ տեղեկութիւններէն առաջնորդուած այցելած են քանի մը կեդրոններ, ուր ենթադրաբար հաւաքական քանդումի պէնքեր կը գտնուէին, սակայն կարելիութիւններ կայացնող որեւէ բան չէին գտած:
● ԲԱՆԻ մը հարիւր իրաքցիներ, որոնք 1991ի պատերազմէն ի վեր սեփական գաղթական մը կը գտնուին, կը պահանջեն անմիջապէս Իրաք վերադառնալ, յայտնեց ՄԱԿի պաշտօնատար մը: Ան աւելցուց, որ սեփական իշխանութիւններուն հետ աշխատանքը պիտի համակարգուի, որպէսզի գաղթականները տուն վերադառնան: Պաշտօնատարը ըսաւ նաեւ, որ տակաւին վերադարձի թուականը չէ յստակացած:

(ԱՅՓ)

Vivez en lumière!
G. AYANIAN & SONS
Dora, (01)255222/3/4/5/6 - Gemmayze, (01)447000-445396 - (03)627728/9
Fax: (01)265187-582357; E-Mail: gasons@dm.net.lb
www.ayanian.com